



ԲՆԱՊԱՐԴՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE
ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

Հեռ.՝ (+37410) 551364;

Email: info@aarhus.am

Հասցե՝ Չարենց 46

№ԾՕԿ_14/11

29_07_2014

Երևանի քաղաքապետ պարոն
Տարոն Մարգարյանին

Հարգելի պարոն Մարգարյան

Վերջին ժամանակներում Երևանի քաղաքապետարանը մեծ ուշադրություն է դարձնում քաղաքի վարչական շրջանների կանաչ տնկարկների խնամքին և պահպանությանը: Ինչը ողջունելի է, անշուշտ կա առաջընթաց և մեր քաղաքը օրեցօր ծաղկում է:

Մակայն քաղաքի ջրային օբյեկտները և նրանց հարակից կանաչ տարածքները գտնվում են անմխիթար վիճակում, ինչը բացասական է անդրադառնում քաղաքի ընդհանուր էկոլոգիական վիճակի վրա: Հարկ է նշել, որ գնալով վիճակը բարելավվելու փոխարեն վատթարանում է:

Երևան քաղաքի Ավագանու 2009թ. N 48-Ն որոշմամբ հաստատված «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման» կարգը ուժի մեջ մտնելուց հետո Հրազդանի ձորում տեղակայված հասարակական սպասարկման օբյեկտների հարակից տարածքների խնամքի և բարեկարգման զգալի տեղաշարժ է նկատվում, սակայն կան տարածքներ, որոնք հարակից չեն որևէ սպասարկման օբյեկտի, հետևաբար անխնամ են և գտնվում են սարսափելի կեղտոտ վիճակում:

Կից Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Հրազդանի Ձորից լուսանկարներ, որոնք կատարված են «Ֆլորենսիա» ռեստորանային համալիրից (սկսած՝ ռեստորանից 500մ հեռավորության վրա) դեպի Կոմիտաս տանող ճանապարհին: Նշված լուսանկարները տեղադրված են նաև Երևանի քաղաքապետարանի ֆեյսբուքյան էջում:

<https://www.facebook.com/photo.php?fbid=686343868102485&set=o.864386000256715&type=1&theater>

<https://www.facebook.com/photo.php?fbid=686343364769202&set=o.864386000256715&type=1&theater>

<https://www.facebook.com/photo.php?fbid=686343244769214&set=o.864386000256715&type=1&theater>

<https://www.facebook.com/photo.php?fbid=686342984769240&set=o.864386000256715&type=1&theater>

<https://www.facebook.com/photo.php?fbid=686343984769140&set=o.864386000256715&type=1&theater>

Ելնելով վերոնշյալից, միաժամանակ մտահոգ լինելով Երևան քաղաքի կանաչ տարածքների պահպանության, պաշտպանության և խնամքի հարցերով, դիմում ենք Երևանի քաղաքապետարանին կոնկրետ առաջարկներով:

- ✓ Բարեկարգել «Ֆլորենսիա» ռեստորանային համալիրից դեպի Կոմիտաս տանող ճանապարհի Հրազդան գետի առափնյա հատվածը,
- ✓ Տեղադրել աղբամաններ նշված տարածքում(մեծ աղբամաններ, նվազագույնը՝ 15 հատ)
- ✓ Կազմակերպել նշված տարածքից հետագա աղբահանությունը (նվազագույնը շաբաթական 1 անգամ)
- ✓ Տեղադրել նստարաններ
- ✓ Այս ամենի արդյունքում նշված տարածքը դարձնել երևանցիների հանգստի վայր:

Ակնկալում ենք, որ նշված առաջարկները հաշվի կառնվեն Երևանի քաղաքապետարանի համապատասխան վարչության կողմից:

Կանխավ շնորհակալություն

Երևանի Օրհուս կենտրոնի
համակարգող

Երևանի Օրհուս կենտրոնի
փորձագետ



Ս. Այվազյան

Ռ. Զեյնալյան